

BTM ջրամեկուսիչ մեմբրաններ

BTM Plastobit PP3000-ը ջրամեկուսիչ մեմբրան է ապակեթելքի (стекловолокно) կամ պոլիէթերային թաղիքի (войлок) կրող շերտով, որն արտադրվում է ատակտիկական պոլիպրոպիլենի (атактический полипропилен) մոդիֆիկացված բիտումից: Մեմբրանի ստորին և վերին մակերևույթները պատված են պոլիէթիլենային թաղանթով, տեղադրվում է բոցամուղի միջոցով տաքացմամբ: BTM-ն արտադրում է տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող 11 տեսակի Plastobit ջրամեկուսիչ ծածկույթներ:



Կիրառման ոլորտը

- տեռասաներ ունեցող տանիքային կառույցներում,
- թեքություն ունեցող բետոնային տանիքներում,
- պատերի ու հիմքերի միացման կցվանքներում ջրամեկուսացման ապահովման համար,
- մշակված է մեղմ կլիմայի համար, օգտագործվում է ջրամեկուսացման իրականացման համար որպես ստորին և միջանկյալ մեմբրանային շերտ,
- այնպիսի խոնավ տարածքներում, ինչպիսիք են բաղնիքը, խոհանոցը, և գրունտային ջրերի ճնշմանը կամ մակերևույթային ջրերի ազդեցությանը չենթարկվող հիմքերը, BTM Plastobit ջրամեկուսիչ մեմբրանն օգտագործվում է որպես խոնավությունից

պաշտպանող մեկուսիչ: Որպես խոնավությունից պաշտպանող նյութը տեղադրվում է 1 շերտով:

Մակերևույթի նախապատրաստումը մինչև նյութի տեղադրումը

Մակերևույթը, որի վրա պետք է տեղադրվի BTM Plastobit մեմբրանը, պետք է մաքուր փոշուց, կեղտից, ժանգից, յուղերից և այլ կողմնակի մասնիկներից: Կախված մակերևույթի տեսակից ու վիճակից՝ անհրաժեշտության դեպքում BTM Plastobit մեմբրանը տեղադրելուց առաջ մակերևույթը պետք է ծածկել BTM-BTS 100 ջրամեկուսիչ նյութով կամ նախաներկով (грунтовка), որից հետո սպասել մինչև վերջինիս լրիվ չորանալը:

Կիրառման եղանակը

Եթե ջրամեկուսացման ենթարկվող մակերևույթը բետոնից է, ապա այն պետք է պատվի անհրաժեշտ թեքություն ունեցող սվաղով (стяжка) և հարթեցվի փայտյա մաքուր ու չոր գրտնակով: Նախքան մեմբրանի տեղադրումը մակերևույթը պետք է պատել BTS 100 (TS103) բիտումային կամ էմուլսիայի հիմքով նախաներկով (грунтовка), որից հետո սպասել մինչև վերջինիս լրիվ չորանալը: BTM Plastobit ջրամեկուսիչ մեմբրանի տեղադրումը պետք է սկսել տանիքային ծածկի ամենացածր կետից (թեքության ամենացածր միջից)՝ գնալով թեքությանը ուղղահայաց ուղղությամբ: BTM Plastobit մեմբրանը սոսնձվում է մակերևույթին բոցամուղի կրակով տաքացնելու միջոցով: Յուրաքանչյուր շարքի մեմբրան եզրով

տեղադրվում է նախորդ շարքի մեմբրանի վրա՝ կարճ ծայրերում ոչ պակաս 15սմ-ից, իսկ երկար ծայրերում՝ ոչ պակաս 10սմ-ից: Կցվանքների (стык) մասերը պետք է սոսնձել առավել մանրակրկիտ: Ծածկող եզրաշերտը շերտերի միջև պետք է լինի կարճ կողմերում՝ մինչև 50սմ, երկարներում՝ մինչև 5մ:

Փաթեթավորումը

BTM Plastobit մեմբրանը թողարկվում է 1մ լայնությամբ և 10մ երկարությամբ գլանափաթեթների տեսքով:



Պահպանման պայմաններն ու ժամկետները

BTM Plastobit մեմբրանի գլանափաթեթները պետք է պահել փակ տարածքներում՝ ուղղաձիգ դիրքով: Երկար ժամանակ դրսում գտնվելու դեպքում գլանափաթեթները արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանելու համար անհրաժեշտ է ծածկել: Տակդիրներում (поддон) գլանափաթեթների պահեստավորման ժամանակ չի թույլատրվում դրանք երկու շարքից ավելի տեղավորել մեկը մյուսի վրա: